

# Տ. ՇՆՈՐՀԱ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ

## Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 օգոստոսի 2004 թ.)

«Յանուն Նօր եւ Որդույ եւ Նոզոյն Սրբոյ. ամէն»:

Փառք ամենաբարձրյալ Աստծուն այս պահի և ապրումի արձանագրման համար, քանի դիկար ենք և Տիրոջ կղորացանք: Եվ ահա պատիկ ունենք մեր դիկար ծետքերում ունենալու Տիրոջ Սուրբ Նշանն ու Սուրբ Ավելարանը՝ աղքարներին քարոզելու Աստծո Ավելարանը և հիվանդներին բժշկելու: Այդու, իմ որդիհական խոնարհությունը, հավաքարմությունն ու սերն եմ հայքում ազգին Վեհափառ Դայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Սըրբազնազոյն Կաթողիկոսին և Ծայրազոյն Պատրիարքին Ամենայն Նայոց: Նորին Սրբությունն իր մականի ներք մեզ ջամբեց հոգևոր կաթը, իսկ մենք՝ իր ծեռնասունները, իբրև ճշմարիկ հոգևորականի դիկայքը ունեցանք իրեն: Նաև իմ որդիհական ակնածանքն ու սերը ինձ ծեռնադրու Սրբազն Նորը՝ իմ հոգևոր ծնողին՝ Սյունյաց թեմի բարեխմամ առաջնորդ Տ. Արքահամ Եպիսկոպոս Մկրտչանին, որը պատճառ դարձավ ինձ և օծակից Եղայրիներին վրա Սուրբ Նոզու յոթնարկիան շնորհների առարկարուի հեղման: Իմ սերն ու շնորհակալությունը Մայր Վթոորի ողջ միաբանությանը, Գնորդյան Նոզուոր ճնմարանի դիեզական կազմին և լուսարարապետությանը՝ իրենց ազնիկ և հոգածու վերաբերմունքի համար:

Ինչպես ունկնդիր եղանք, օրվա ընթերցվածը բարկացած էր երեք մասից, որոնցից առաջինը վերցված էր Եսայու մարզաբության հինգերորդ զիսից, և իր մեջ ամփոփող զիսավոր միբքը հեփկյան էր. «Զի այզի Տեառն զօրութեանց՝ փունն Խորայելի է, եւ մարդն Յուղայ՝ նորապունկ սիրելի. մնացի զի արասցէ իրաւուն, եւ արար անիրաւութիւն, եւ ոչ արդարութիւն այլ աղաղակ» («Զորությունների Տիրոջ այզին Խորայելի փունն է, Նուղայի երկրի մարդը՝ երա սիրած դալար որթապունկը: Սպասեցի, որ նա իրավունքը պահի, առաջ քանի, քայ նա անիրավություն արեց, արդարության փիխարեն՝ ողը ու աղաղակ») (Եսայի Ե 7):

Երկրորդ հապվածն ընդրված է՝ Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված առաջին թղթից. «Եթէ, ո՞չ զիկութք, զի մարմինը ձեր դրանք են Նոզոյն որ է ի ձեզ, զոր ունիքն յԱսպուծոյ. և չէք անձանց վեր, քանզի զնոց զնեցայք. փառաւոր արարեք զԱսպուած ի մարմինս ձեր» («Զզիկութք, թէ ձեր մարմինները դրանք են Սուրբ Նոզու, որ ձեր մեջ է, և որն սրացել եք Աստծուց և դուք ձեր դրանք չեք, քանզի մեծ զնոց զնվեցիք: Փառավորեցներ Աստծուն ձեր մարմինների մեջ») (Ա Կորնթ Զ 19-20): Եվ երրորդ՝ Ավելարանական հեփկյալ հապվածը. «Զից!» ընթերցեալ ձեր՝ թէ որ հասպարեացն ի սկզբանէ՝ արու եւ էզ արար զնուսա և ասէ. վասն այսորիկ թողդէ այր զիայր եւ զմայր՝ եւ երթից զիեւ կնոշ իրոյ, և եղիցին երկորեան ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին: Արդ զոր Ասպուած զուգեաց՝ մարդ մի մնկնեսցէ» («Դուք չե՞ք կարդացել, թէ նա, ով սկզբից սպեղծեց, արու և էզ արեց երանց և ասաց. դրա համար դրամարդը պիսի թողնի հորը և մորը ու պիսի զնա իր

կնոց երևից, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Ասրված միացրեց, մարդը թռող քածանի») (Մաթթ. Ժթ-4-6):

**Աշավասիկ.** Սուրբ Գրքի այս երեք հարվածները մեր իմաստուն հայրենի կողմից համարված և աղերսված են միմյանց: Երբ ընթերցում կամ ականջալոր և ներ լինում վերորերյալ սուրբգրային տեղիների ամբողջությանը, ակամայից հարց ենք դալիս մեզ՝ ինչ առընչություն և կապ կարող են ունենալ միմյանց հետ ասրվածաշնչյան այս տեղիները, և ո՞րն է իմաստը ու նպագրակը դրանց համապելման: Սակայն քանից ընթերցման և ուշադրության սևեռման արդյունքում կարմիր թելի նման մեր միքրում ընդգծում է այն հիմնարար գաղափարը, ինչն ինքնին կապող օղակն ու հոգեկից պարզամն է՝ իբրև արդյունք այդ ընթերցվածների համարման: Այդ բոլորի մաս կազմող առաջին հարվածում փոխաբերական առումով ներկայացվում է դարերի հոլովույթում Խորայելի՝ որպես ժողովուրդ և Ասրծո փոխարաբերությունը: Ասրված այսպես հանդես է գալիս իբրև ջանք ու եռանդ շնչառող մի մշակ, որ այզում եղած ծառերը, որոնք իր բրդինքով էր ջրել, սպասված արոյունքը չեն դրալիս, և Ասրված այս պարագային, իբրև այզու վեր, պարբռասրվում է արդար դարպասքանի:

Երկրորդ մասը, ինչպես գրեսանք, վերցված է ասրվածախոս Պողոսի՝ Կորնթացիներին ուղղված առաջին թղթից, որը առաջարկ հորոդում է՝ հեռու մնալ և խորշել անքար կյանքից, փոխարենն ապրել ասրվածադիր պարվիրանների համաձայն: Դիմնական շեշտն այսպես դրված է ամուսնական կյանքի հավաքարմության, հանձնառնված ամուսնական պարպականությունների կարպարման վրա: Չնայած որ բոլորի՝ իրեն նմանվելն առաջարկ շահ է համարում, այդուամենայնիվ զիրակցում է հարցի դժվար և ոչ ընդհանրաբար կիրառելի լինելը, այդ իսկ պարբռառով միանշանակ պարբռադիր չի համարում ամուրի մնալը: Ասրվածախոս Պողոսը, որպես ընդգծված, ցայլուն և համընդիմանոր ըմբռնողության ենթակա կյութ, ընդունել է ամուսնական կյանքն իբրև վար օրինակ՝ դրա միջոցով փորձելով մեզ ցույց տալ երկնողմանի խոսքումի, պարբռականության և ուխտի զաղափարը:

Վերջապես, երրորդ և զիլսավոր հապվածը՝ մեջքերված Մարդեսոսի Ավելքարանից, որը փարիսեցիները մոփենում են Քրիստոսին և փորձելով հարցնում Նրան, թե իրավունք ունի՞ որևէ մնալը արձակելու իր կնոջը: Եվ Դիտու պարապահանում է նրան Մովսիսական կրոնի հիմքը հանդիսացող թալմությաց բերված վկայությամբ, որը ասված է՝ Ասրված սկզբից արու և էզ սպեղծեց մարդկանց, դրա համար պղամարդը պետք է թողնի իր հորն ու մորը և միանա իր կնոջը, և երկուսը մի մարմին պիտի լինեն: Սակայն այս իրողության վրա չէ, որ պետք է կանգ առնենք և քննենք, այլ սույն հարվածի շարունակությունն ու անքակտելի մասը կազմող և մրցի ամբողջությունը հանդիսացող մեկ որիշ հանգրվանի և նրանից բխող օրվա խորհուրդը լիակաբար և նշանակալի դարձնող հարվածի վրա, որը ավելքարանից շնչրադումը կարարում է մարդու և իր նմանի միջև կայացրած ուխտի վրա, ինչն իր վար դրսնորումն սպանում է հեթևյալ բանաձևումի մեջ՝ որեմն որևէ մնալը թռող քածանի նրանց, ում Ասրված միացրեց:

Այսպիսով, չնայած որ ընթերցվածները միմյանց հետ շաղկապված են զանազան, զույց մեզ համար ոչ դյուրընթելի և անհասանելի մրահանգումներով, այդուամենայնիվ մեր զիլսավոր նպագրակը դրանց մնակելու իրար հետ խոսուն լինելու և օրվա պարզամն մի փորքիկ մասի վերծանումն է՝ ի զվարճություն մեր հոգու և մրցի, ինչն ինքնին դինզերում

եղած երեք կարևոր փոխհարաբերությունների ճիշդ և առողջ գործածումն է անհապի իսկ հոգու փրկագործության՝ իբրև հիմնավոր և կարևոր նախապայման:

Դրանցից առաջինն Ասթո՞ն՝ վիեզերքի Արարչի և այդ արարագործության պատճեն հանդիսացող մարդ էակի միջև եղած խոսքումի, պայմանի, կրոնական իմաստով ուխտի գաղափարն է: Երկրորդը՝ մարդու և իր նմանի միջև եղած փոխհարաբերության, միմյանց հանդեպ դրսուրած վերաբերմունքի, սիրո, որդեգրած պարտականությունների կագարումն է: Եվ, ի վերջո, երբորդ նախապայմանը, որ ամենակարևորն ու հիմնականն է, իր մեջ ունի նաև նախորդ երկու դրույթների ամբողջությունը, անհապի՝ ինքն իր ներքին աշխարհի հետ փոխհարաբերության, նյութի և հոգու երկվության հաղթահարումն ու դարերի հոլովույթում առաջացած անջրաժեռի այդ բացի լրացումն է, այսինքն՝ անհապի խոսքի և գործի միջև եղած վիհի վերացումն է՝ իրար հակադիր ընենների մերձեցմամբ:

Այդու, սիրելի հավաքացյալ, օրվա պարզամը մեզ հեկլսյան է՝ յուրաքանչյուրիս պարտականության և խոսքման կարարումը մեր Արարչի՝ Փրկագնողի և հոգածու խնամաբարի նկարմամբ, քանզի Տիրոջով է իրականանում ամեն մի մրածում, ձևոնարկ և նախադասված գործ, և թող որու մենքն իր ձեռքբերած հաջողություններն ու նվաճումները, լինի հարաբություն, պարիվ թե պաշտմն, զենքագրի իր անձի արժանավորությանը՝ իբրև իր մրգի թուշքի արդյունք, որովհերքն այս կյանքում, լինի իշխանավոր թե հասարակ մշակ, իր արժանիքի և կարարած գործերի որպես հապուցում չի սրանում այն ամենը, որ ունի, այլ Տիրոջ ողորմության արդյունքում է, որ, ինչպես Ավելարանում է ասվում, արև է ծագեցնում և անձրև գեղացնում և՝ չարերի, և՝ բարիների վրա:

Մյուս կարևոր նախապայմանը՝ մարդո՞ւ իր նմանի նկարմամբ վերաբերմունքի ճիշդ դրսուրումն է, ինչպես որ Հովհաննես առաջան է ասում սուր է խսում այն մարդը, որ պատում է թե Ասթուն սիրում է, բայց իր եղբորը չի սիրում: Եվ, իրապես, ինչպես կարող է մարդ սիրել Ասթուն, որին չի գետել, և արել իր նմանին, որ նոյն Ասթոն պարկերով է սրեղծված: Եվ, վերջապես, ամենակարևոր դրույթը, որ այսօր պակասում է յուրաքանչյուրիս. ինքներս մեր անձի հետ հաշփության և խաղաղության հասպատումն է, որ է մեր իսկ արդարաբերած խոսքերի և հոգելից ծգրումների իրականացումն ու կյանքի կոչնը:

Ներևարար, որպես զիրակցական կյանքով ապրող և Ասթոն պարկերով սրբեղձված, այսինքն՝ բանականությամբ օժիգած մարդիկ, հանձնառու պիտի լինենք վերոհիշյալ պարտականությունների կապարմանը՝ դրանով իսկ փաստելով Քրիստոսի ճշմարիք աշակերդ լինելը: Ահա, այս խորհրդածություններով բողոքված և օրվա խորհրդի լիակարար ըմբռնողությամբ, հավաք Սուրբ Պավարացի դուրս գանք այս լրաճարից՝ նմանողությամբ Մովսեսի՝ Սինա լիսից իշխելուն, մեր հոգիներում, հար և նման քարե գախտակների, դրոշմած ունենալով օրվա սուրբքրային ընթերցվածների ամբողջությունը՝ իբրև ծաղկաբույլց գարածվող անոշահոգության արքեցնող և իմաստացնող գաղափար, որ է հավաքարմություն՝ իր ամրող և խորաթափանց իմաստով:

Եվ թող «Ճնորհը, սէր և ասպաւածային սրբարար գորութիւն եղիցի ընդ ձեզ և ընդ ամեննեսեաւաւոյ ամէն»: